

ՀԱՅՈՑ ԴԻԻՑԱԶՆԱՎԷՊԻ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկանուշ Մեսրոպեան, Աննա Պողոսեան

Ներածություն

«Սասնայ ծռեր» դիւցազնավէպի արմատները ձգւում են դէպի դարերի խորքերը: Այն՝ որպէս աւանդական վէպ կամ էպոս, որոշապէս տարբերւում է առասպելից: «Մինչ առասպելներն ունեն աւելի դիցական բնաւորութիւն, շատ քիչ պատմական ազդեցութիւն են կրած և յաճախ փոխառութիւն են ուրիշներից, վէպն, ընդհակառակն, իր ծագումով, ընդհանուր առմամբ, բնիկ, ինքնուրոյն ստեղծագործութիւն է: Դա պատմական բանաստեղծութիւն է: Դրա նիւթը պատմութիւնն է»,¹ փաստում է Մ. Աբեղեանը¹:

էպոսի բնորոշն՝ Սասունի ու սասունցիների մասին առաջին անգամ յիշատակում է Ղուկաս Ինճիճեանը. «Բնակիչք, որք քուրդք և հայք, որոց հրկոքին ևս զմի և զնոյն ազատութիւն ունին, արք յաղթանդամք և քաջասիրտք, երևելիք ի կորովութիւնս մարմնոյ, ահագնք ի պատերազմի, որոց միայն ստուարութիւն հերաց, մանաւանդ ոմանց ի նոցանէ ահացուցնէ զտեսողսն, որք ի սկզբանէ անտի միշտ եղեն ինքնագլուխ, ոչ ումեք ծառայելով և ոչ ոք ի փաշայից կամ ի պէյից կարող զտաւ զսոսա նուաճել, սակա զօրութեան ուժոյ սոցա

և սակա ամուր վայրացն, յորս ապաստանեալ ոչ ումեք թողուն մուտս առնել»²:

Օտար բանագէտները նոյնպէս դնահատանքի խօսքեր են նուիրել մեր դիւցազնավէպին՝ տեսնելով նրանում տիեզերական հրանգներ: Ա. Բանկը «Բիւզանդական էպոսի Դիգենիս Ակրիտասը և Սասունցի Դաւիթը» յօդուածում համեմատում է հայերիս էպոսը յոյների, ինչպէս նաև Փոքր Ասիայի ժողովուրդների վէպերի հետ և համոզում է յայտնում, որ որոշ նմանութիւններով հանդերձ, «... հայկական էպոսի արմատները հասնում են շատ աւելի հեռաւոր մի ժամանակի, հասարակական զարգացման մի այլ ստադիայի, որի դադափարախօսութիւնն ունի ցայտուն կերպով արտայայտուած կոսմիքական գծեր»³:

Տիեզերական բնոյթից զատ՝ «Սասունցի Դաւիթ» էպոսը ընդհանուր առմամբ հայ ժողովրդի բանահիւսական - վիպական պատմութիւնն է, մեր դարաւոր կեանքի հանրագիտարանը⁴:

Հայ և օտար մասնագէտները տարբեր դիտանկիւններից (առաջին բանագէտ-գրառող⁵, ջրածին լինելու յատկանիշ⁶,

1 Աբեղեան Մ., Երկեր, հտ. Ա., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966, էջ 94:

2 Հ. Ղուկաս Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հտ. Ա., Վեներտիկ-Ս. Ղազար, 1806, էջ 200:

3 Բանկ Ա., Բիւզանդական էպոսի Դիգենիս Ակրիտասը և Սասունցի Դաւիթը.- «Սասունցի Դաւիթ», Յոբելեանական ժողովածու՝ նուիրում էպոսի 1000-ամեակին, ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալ, Արմֆան հրատ., Երևան, 1939, էջ 108-109:

4 Տե՛ս Մելիքեան Յ., Հայրենասիրութիւնը, դէմոկրատիզմը և աշխատանքի գաղափարը «Սասունցի Դաւիթ» էպոսում.- «Սասունցի Դաւիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 145:

5 Տե՛ս Ղազարեան Յ., Հայ էպոսի առաջին պատումն արժէքատրոյն ու գրի առնողը.- «Սասունցի Դաւիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 191-200:

6 Տե՛ս Տրևեր Կ., Հայկական էպոսի ջրային Անթոնը.- «Սասունցի Դաւիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 95-102:

կերպարներ և տիպաբանություններ⁷, պատկերաւորման միջոցներ և բնույթ⁸, մշակութային առընչություններ⁹, դարաշրջան, պատմական և տեսական հարցեր¹⁰, ժողովածուներ¹¹, բառարան¹², պատումներ¹³, հետազոտություններ¹⁴, թարգմանություններ¹⁵, պարբերականություններ¹⁶ և այլն) քննել են Հայկական էպոսը, սակայն լեզուականը, յատկապես տարածքային պատկանելության սահմանները և բարբառային առանձնայատկությունների հարցերը հիմնովին չեն բացայայտված:

Ի լրումն ասուածի՝ Ա. Սահակեանը հաւաստում է, որ «Արդէն գիտական լայն շրջանակներին հասու են դարձել վէպի՝ աւելի քան հարիւր յիսուն պատումների համեմատական համայնապատկերը, վէպի մօտաւոր պատմական ակունքները, վիպական ինչ-ինչ դրուագների հեռու կամ մօտ պատմական նմանակները, հերոսների պատմական նախատիպերը, աշխարհագրական վայրերը, կենցաղը, վէպի կազմի մէջ մտած առասպելները կամ նրանց բեկորները»:

ըր, նշուել են հերոսների վարքագծի դիցաբանական զուգահեռները, գործող անձանց յարաբերությունների առասպելաբանական ու հոգեբանական արմատները, երգիծանքը և հումորը, «ծուռ» մականունան յարաբերական, դինամիկ բնույթը, ընդհանուր վիպական մոտիւնները և վիպականացման միջոցները, էպոսի ժանրի ստեղծաբանութեան (պոէտիկայի) միջազգային հասկացությունների կիրարկելիությունը վէպի նկատմամբ, աւելի նուազ չափով անդրադարձ է եղել նաև վէպի գլխաւոր դերակատարների առնականաբանական նկարագրին, հերոսների անունների լեզուական ու վիպական իմաստներին, թւում է՝ հանգամանօրէն վեր են հանուել վէպի ճիւղերը կազմող յարաբերականօրէն ինքնուրոյն երեք բաղադրիչները՝ Սանասարի, Մհերի, Դաւթի սիւժէպատումները, վերջապէս, սկսուել է վէպի հետագայ ուսումնասիրումը խթանող մատենագիտական սպասարկումը, որի հիմքը

- 7 Տե՛ս Մակարեան Ա., «Սասունցի Դաիթ» էպոսի տիպերը, - «Սասունցի Դաիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 111-139: Յովսէփեան Լ., *Էպոսի տասը ընտիր պատումները*, - «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագիրը և Յ. Օրբելի, Երեւան, 2018, էջ 39-66: Համբարձումեան Հ., «Սասնայ ծոերի» պատումների Մշոյ տիպաբանական խմբի կառուցումը քային որոշ առանձնայատկութիւններ, - «Էջմիածին» ամսագիր, Զ-Է, 2008, էջ 113-117:
- 8 Տե՛ս Մխիթարեան Ա., «Սասունցի Դաիթ» էպոսի պատկերաւորման բնոյթը, - «Սասունցի Դաիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 171-190:
- 9 Տե՛ս Լևոնեան Գ., Հայ կոլտուրան «Սասունցի Դաիթ» էպոսի ստեղծման ժամանակաշրջանում (8-12-րդ դար), - «Սասունցի Դաիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 201-229:
- 10 Տե՛ս Յարութիւնեան Հ., Սասունցի Դաիթ էպոսի դարաշրջանը (պատմական տեսութիւն), - «Սասունցի Դաիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 231-266:
- 11 Տե՛ս Դոլոյանեան Ա., «Սասունցի Դաիթ» ժողովածուները (1939 թ.), - «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագիրը և Յ. Օրբելի, Երեւան, 2018, էջ 13-29:

- 12 Տե՛ս Գալստեան Ա., «Սասունցի Դաիթ» էպոսի բառարանը, - «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագիրը և Յ. Օրբելի, Երեւան, 2018, էջ 30-38:
- 13 Տե՛ս Յովսէփեան Լ., *Էպոսի տասը ընտիր պատումները*, - «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագիրը և Յ. Օրբելի, Երեւան, 2018, էջ 39-66:
- 14 Տե՛ս Օրբելի Յ., Հայկական հերոսական էպոսը, Երեւան, 1956: Դոլոյանեան Ռ., Յ. Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» հետազոտութիւնը, - «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագիրը և Յ. Օրբելի, Երեւան, 2018, էջ 67-78:
- 15 Տե՛ս Գրիգորեան Մ., «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագրի թարգմանութիւնները, - «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագիրը և Յ. Օրբելի, Երեւան, 2018, էջ 98-113:
- 16 Տե՛ս Մելքոնեան Լ., Յակոբեան Ա., «Սասունցի Դաիթ» էպոսի 1000-ամեակին նուիրում յօդուածներ 1938-1939 թուականների պարբերականներում, - «Սասունցի Դաիթ» էպոսի համահաւաք բնագիրը և Յ. Օրբելի, Երեւան, 2018, էջ 114-124:

նոյնպէս գրել է Մ. Աբեղեանը 1939 թ.»¹⁷:
 Ըստ այսմ՝ կարող ենք ասել, որ լեզուաբար-
 քառագիտական ուսնունմասիրութիւնը
 դեռևս ճանապարհ ունի անցնելու, որի
 հիմքերն ու նախադրեալներն կան:

Բանասաց-բանահաւաք-բարբառ եռա-
 միասնութեան փոխարարներութեան
 մասին

Ընդհանրապէս էպոսի հետ առնչուե-
 լիս ակնառու են դառնում բարբառի իւրօ-
 րինակ հարստութիւնն ու պերճութիւնը, ի
 յայտ են գալիս դարձուածքների իմաստա-
 յին խոր շերտերը, ժողովրդական լեզուամ-
 տածողութեան պարզութիւնն ու խորը խո-
 հականութիւնը:

Իւրաքանչիւր բանահաւաք, առն-
 չուելով պատում – ասացող – բարբառ ե-
 ռամիասնութեանը, անմեկնելի եռանդով
 ու սիրով է համակուծ հայոց լեզուի ու
 հայրենի եղբրքի նկատմամբ՝ մեծ ջանքեր
 գործադրելով մայրենի լեզուի պահպան-
 ման եւ տարածման համար: Դրա վառ ար-
 տայայտութիւնն է բանագէտ-բարբառա-
 գէտ Գ. Սրուանձտեանի հետեւեալ միտքը.
 «Իմ փափաղս եղած է, որ բանասէրք ու-
 չագրութիւն դարձունեն Հայաստանի մէջ
 բնակած Հայոց ժողովրդական լեզուաց եւ
 այն լեզուններով հրատարակեն վէպեր,
 տրամախօսութիւններ եւ այլն, եւ այսպէսով
 սիրելի եւ ծանօթ կացուցանեն զանոնք
 գրագիտաց, որպէս զի նոցա ձեռքով
 հետզհետէ ի կանոնաւոր գործածութիւն
 վերածին այն լեզունները, եւ ժամանակին
 մաշող ժանիքէն զերծանին ազգային դա-

րաւոր բանից եւ աւանդից յիշատակները, ո-
 րոց արժէքը կորսուելէն յետոյ կ'զգանք
 զանոնք աւաղելու համար միայն»¹⁸:

Բանասաց – բանահաւաք – բարբառային
 տարածք եռապատկերը համակարգուած
 ներկայացուած է «Սասունցի Դաւիթ» էպո-
 սի մատենագրութեան մէջ¹⁹, ինչպէս նաեւ
 Տ. Զիթունու «Սասունական»-ում²⁰: Այս
 շարքը բացուած է Գ. Սրուանձտեանի բա-
 նագիտական-բանահաւաքչական, յաճախ
 էլ բարբառագիտական նիւթերով, որից պի-
 տի օգտուէին հետագայ բանասէրները:

Ընդհանուր առմամբ էպոսը յայտնի է
 իր չորս ճիւղերով, սակայն բանահաւաք Տ.
 Զիթունին 1874-1907 թթ. գրի է առնում
 հայ ժողովրդական դիւցազնավէպի եօթը
 ճիւղից բաղկացած մի պատում, որը, ինչ-
 պէս ինքն է բնութագրում, «ամենահարա-
 վատ, ուժեղ ու վսեմ բարբառով մը, ճշմա-
 րիտ դիւցազնիւրդական լեզուով մը, որ ան-
 կասկած կրնայ սեպուել Թագուհի՝ Հայ դա-
 ւառաբարբառներուն: Սպարկերտի գիւղա-
 կան բարբառովն ու մեծ խնամով իմ գրի ա-
 ռած փոփոխակն է այդ»²¹:

Ասուածի առիթով նշենք, որ Սպարկեր-
 տի բարբառ որակումը բարբառագիտական
 գրականութեան մէջ չի հանդիպում: Ըստ
 Գ. Զահուկեանի՝ հայերէնի բարբառների
 բազմայատկանիչ-վիճակագրական դասա-
 կարգման աղիւսակի՝ Վանի բարբառի խօ-
 սուածքների թւում նշուած է Սպարկերտի
 գլխաւոր գիւղերից Բաստի հաղորդակցու-

17 Սահակեան Ա., «Սասնայ ծոեր», Հայ ժողովրդա-
 կան վէպ, Ընտիր պատումներ, Աշխատասի-
 րութեամբ Կարապետ Մելիք-Օհանջանեանի,
 «Էդիթ պրինտ» հրատ., Երևան, 2015, էջ 4:

18 Սրուանձտեան Գ., Գրոց ու բրոց եւ Սասունցի
 Դաւիթ կամ Մհերի դուռ, Տպագրութիւն Ե.Մ.
 Տնտեսեան, Կ. Պօլիս, Օտուն Գաբու ճատտէսի,
 465, 1874, էջ 192:

19 Տե՛ս «Սասունցի Դաւիթ» հայ ժողովրդական
 էպոս, Բիբլիոգրաֆիա, կազմեցին՝ Մ. Բաբա-
 յեան եւ Ս. Միքայէլեան, ՀԽՍՀ պետական հան-
 րային գրադարան, Պետհրատ, Երևան, 1939:

20 Տե՛ս Զիթունի Տ., նշ. աշխ.:

21 Զիթունի Տ., նշ. աշխ., էջ 19:

թեան լեզուն, որից կարող ենք եղբակացնել, որ Սպարկերտի հայերէնը Վանի բարբառի խօսուածքներից է²²:

Բանասաց-բանահաւաք-բարբառատարածք փոխյարարերութեան մի օղակն են կազմում Էպոսի գրառման առանձնայատուկութիւնները և դժուարութիւնները:

Էպոսի գրառման ծաւալների ու լայն թափի մասին Ս. Յարութիւնեանը գրում է. «Բանահիւսական յուշարձանների, այդ թւում նաև վէպի նոր տարբերակների կազմակերպուած և կոլեկտիւ եղանակով արդիւնաւէտ դրառումներ են կատարւում 1915-1916 թթ. ընթացքում, երբ Ե. Լալայեանի բանահիւսական արշաւախումբը ջարդի ու տեղահանութեան հետեանքով Արևմտահայաստանից գաղթած և Արևելեան Հայաստանում ու Անդրկովկասում ապաստանած հայ զանգուածներից գրառում է բանահիւսական շատ հարուստ ու մեծարժէք նիւթեր»²³:

Աւանդական վէպի գրարկման կատարելութեան առաջին նախապայմանը բանահաւաքի՝ տուեալ փոփոխակի լեզուական տարածքային տարբերակի հնչիւնական, քերականական և բառապաշարային իրողութիւններին ծանօթ լինելն է: Ինչպէս նկատում է Մ. Արեղեանը, «Վէպը պէտք է գրել հէնց իրեն տեղում, մինչդեռ էջմիածնի մարդիկը մեծ մասամբ էջմիածնում նստած են գրել՝ լսելով պանդուխտներից, իսկ պանդխտութիւնը, ինչքան էլ կարճատև լինի, շատ զօրեղ ազդեցութիւն է աւելում պանդխտողի հոգեկան վիճակի, հետևաբար և վէպի վրայ»²⁴: Մ. Մկրեանը ևս

առանձնակի կարևորութիւն է տալիս բանասացների ընտրութեանն ու դերին: Նա գրում է. «Էպոսի համաշխարհային պատմութեան մէջ «Սասունցի Դաւիթը» այն բացառիկ նմուշներից է, որ մարդկութեանը հասել է դրի առնուելով անմիջապէս ժողովրդական ասացողների բերանից»²⁵:

Գրառման դժուարութիւնները յաղթահարելու մասին ուշագրաւ յիշատակումներ ունեն նաև բանահաւաքները: Ինչպէս յայտնի է, պատումների մեծ մասը նախ համառոտ տեղեկութիւններ է հաղորդում բանահաւաքի և բանասացի անձնական տուեալների մասին, նշում է ասացողի՝ որտեղացի լինելը, որը մեծապէս օգնում է բարբառային պատկանելութիւնը որոշելուն, երբեմն ներկայացնում է պատումի խօսուածքային տարածքը՝ որոշակի գիտելիքներ հաղորդելով այդ բարբառի հնչիւնական, բառապաշարային, քերականական և լեզուական կարևոր յատկանիշների մասին:

Օրինակ՝ «Սենեքերիմ թագաւոր» պատումի մասին կարդում ենք. «Պատմեց 1912 թ. յուլիսի 12-13-ին Բաղարճղում, տեղացի Բարսեղ Սահակեան, յիսնամեայ անգրագէտ ծերունին, որի ծնողները գաղթել են Ալաշկերտի Համակնայ գիւղից: Այս հեքեթը նա սովորել է իւր հօրից, որը, իւր հերթին, սովորել էր Ագինա գիւղացի Զուռակցի Գրիգորից, որ գաղթական է եղել Ալաշկերտի խաղու գիւղից: Այժմ Բարսեղը երկրագործութեամբ է պարապում, եւ ձմեռները յաճախ հեքեթներ է ասում, թէ այս և թէ ուրիշներ»²⁶:

Այսպէս նաև՝ «Կրպոն կը պատմէր, թէ իւր վարպետը շատ ընդարձակն գիտէր այս

22 Տե՛ս Զահուկեան Գ., Հայ բարբառագիտութեան անթաճութիւն. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 134:

23 Սասնայ ծոեր, Ժողովրդական վէպ, աշխատութեամբ՝ Սարգիս Յարութիւնեանի, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1977, էջ 621:

24 Արեղեան Մ., Հայ ժողովրդական վէպը, Վաղարշապատ, 1908, էջ 15:

25 Մկրեան Մ., Հայ հին գրականութեան պատմութիւն, ԵՊՀ, Երևան, 1976, էջ 336:

26 Հալայեան Ե., Մարգարիտներ հայ բանահիւսութեան. Գ. գիրք, Էջմիածնի գաւառ, Բանահիւսութիւն, Ապարան. տպարան Մայր Աթոռոյ սուրբ Էջմիածնի, Հայոց ազգագրական ընկերութիւն, Թիֆլիս-Էջմիածին, (ա.թ.), էջ 109:

պատմութիւն, և թէ մէջ ընդ մէջ շատ տեղեր ոտանաւոր խաղեր կային, որ ձայնով կերգէր: Թէ՛ այդ վարպետն երկու վռըշիկ աշակերտ ունէր, որոնք շատ կատարեալ սորված էին, և թէ ինքն՝ բաւական ժամանակ պատմած չլինելով, շատ կտորները պատմած չլինելով, շատ կտորները մոռացած էր»²⁷:

Ապա և՛ «Մոկացի Նախօ քեռին «Սասնայ ծռերը» լսել է իր հայրենիքում (Մոկսի Գինեկանց գիւղ) մի քանի ասացողներից, որոնց թւում է եղել նաև Զատիկ խապոյենցը: Նա հագողադէպ էր պատմում, բայց երբ սկսում էր պատումը, ոգեշնչւում էր և պատմում էր պաթոսով»²⁸:

Երբեմն բնասացների մասին ծանուցումներն աւելի ընդարձակ և կենսագրական բնոյթի են լինում: Այսպէս, օրինակ՝ «Բանասաց Մանուկ Թորոյեանը ծնուել է 1864 թ. Ալաշկերտ գաւառի խաստուր գիւղում: Նրա հայրը և հօրեղբայրը ծնունդով եղել են Բիթլիս գաւառի խուլտիկ գիւղից, բայց քրդերի հետ բախումների հետևանքով վերաբնակուել են խաստուրում, որտեղ դբաղուել են բրուտագործութեամբ, իսկ Մանուկը հոտաղ է եղել: 1898 թ. ամուսնացել է, ունեցել վեց որդի, որոնցից կենդանի է մնացել միայն մէկը»²⁹:

Գրանցման դժուարութիւններից էին նաև բանասացների մարդկային յատկանիշները, բնաւորութեան գծերը: Օրինակ, բանասաց Թամօ Դաւթեանի մասին կարդում ենք. «Թամօն անգրագէտ, շատ նահապետական և աւանդոյթներին հաւատարիմ մարդ էր, ինքնամիտի ու մենակեաց:... Լինելով ինքնասածի, ինքնամիտի, քչախօս մարդ, նա խուսափում էր անծանօթ մարդկանցից: ...Սասունցիների միջավայրում բանասացի մեծ համբաւ է ունեցել:

Նրանց կարծիքով «Սասնայ ծռերի» իսկական պատմութիւնն իմացել է միայն Թամօն, իսկ մնացած բոլոր ասացողներն այն խեղաթիւրել են»³⁰:

Տ. Զիթունին իր բանասաց Կանչոյից գրի առած փոփոխակի մասին գրում է. «Կանչօի պատմած «Սասմանց Տունը» իր բերնէն գրի առած ևմ ես ինքս անձամբ, Վանայ մէջ, 1907ին, այն բծախնդիր գիտական մեթոտով, ինչպէս հազարաւոր էջեր կազմող ֆօլքլօրական ուրիշ նիւթեր իրմէ եւ իրեն գիւղակից ուրիշ պատմիչներէ»,- ապա յաւելում է. «Ձայնագիրի չափ լրիւ գրարկում մըն է եղած գիւղացիներու բերնէն իմ գրի առած բոլոր ազգագրական նիւթերուն»³¹: Այս փաստը խօսում է Վանի բարբառի՝ XX դարասկզբի լեզուավիճակի ստոյգ վերարտադրութեան մասին: Ըստ այսմ կարող ենք ասել, որ Զիթունու գրի առած պատումը Վանի բարբառի մի անխաթար տարբերակ է, քանի որ ութ տարի յետոյ՝ 1915 թ., Վասպուրականի հայութիւնը հայրենադրւում է, իսկ բարբառակիր խնակաների լեզուն տարբեր բնակավայրերում ննթարկւում է ազդեցութիւնների եւ այլափոխման՝ յաճախ կորցնելով լեզուական եզակի յատկանիշներ:

Էպոսի պատումների անառարկելի գրառող էր Մշոյ Սուրբ Կարապետ վանքի տնօրէն-ուսուցիչ վանեցի Գ. Սրուանձտեանցը, որը լիովին տիրապետում էր հնչիւնական և քերականական տարբեր համակարգեր ունեցող Վանի և Մուշի բարբառներին, այսուհանդերձ մտավախութիւն ունէր, որ էպոսի՝ իր գրառած առաջին տարբերակի արժէքը ըստ ամենայնի չի ընկալուի: Այդ մասին նա գրում է. «Այս գործիս հրատարակութիւնը հասկացողին համար արժէք կ'ունենայ...: Բաջալերուած կը համարիմ զիս, եթէ համրանքով քսան հոգի

27 Սասնայ ծռեր, Ընտիր պատումներ, Աշխ. Կարապետ Մելիք-Օհանջանեանի, էջ 161:

28 Նոյն տեղում, էջ 195:

29 Նոյն տեղում, էջ 471:

30 Նոյն տեղում, էջ 557:

31 Զիթունի Տ., Գշ. աշխ., էջ 23:

ևեթ լինին հաւանող այս գործոյն»³²: Ժամանակը արժեքորում է առաջին դարակողի դարակազմիկ աշխատանքը, գրականագէտներն ու բանագէտները ըստ հարկին վերլուծում են ու բազմակողմանիորէն ներկայացնում XIX դարի բացառիկ ձեռքբերումը: Ինչպէս փաստում է Մ. Աբեղեանը, «Սիրողները յափշտակուեցան այդ գործով, իսկ թերահաւատները, թէպէտ զարմանալով, բայց հաւատացին, որ մեր ազգի մէջ ևս կարող են լինել ժողովրդական վէպեր: Ժողովրդագրական նիւթով զբաղուողի և բարբառներ ուսումնասիրողի համար պարզ պիտի լինէր այդ հրատարակութեան մեծ արժէքը և պիտի օգտուէին նրանից»³³: Օգտուողների շարքում Մ. Աբեղեանը մասնաւորաբար նկատի ունի Բ. Պատկանեանին, Ս. Մանգինեանին և Գ. Խալաթեանին: Բ. Պատկանեանն այդ տարբերակը ներառում է իր «Մշոյ բարբառը» գրքում³⁴, Ս. Մանգինեանը յարմարեցնում է իբրև դասագիրք՝ «Ազգային դիւցազնական աշխարհ» վերնագրով, Գ. Խալաթեանը թարգմանում է ռուսերէն³⁵:

Էպոսը որպէս բարբառագիտական
ուսումնասիրութեան բնօրինակ և
վստահելի աղբիւր

Էպոսը հիմնականում ուսումնասիրել են գրականագէտ-բանագէտները, որոնց խնդրից դուրս է եղել էպոսի պատումների լեզուական առանձնայատկութիւնների, բարբառային տարածական յատկանիշների

բացայայտումը, առանց որոնց ժողովրդական վէպի մասին ասելիքը մնում է անաւարտ:

Բանահաւաքներին և բանագէտներին հիմնականում հետաքրքրել են վէպի տարածման սահմանները, որոնց վերաբերեալ էլ հարցեր են տուել ասացողներին: Այդ սահմանները կարևոր գործօն են յատկապէս տուեալ պատումի բարբառային պատկանելութիւնը որոշելու և լեզուական առանձնայատկութիւնները տարբերակելու, դասակարգելու և ճշգրտելու համար: Այս խնդրում ծաւալուն աշխատանք ունեն կատարելու լեզուաբանները, մասնաւորաբար՝ բարբառագէտները:

Անդրադառնալով այս հանգամանքին՝ Մ. Աբեղեանը ևս նշում է, որ մեր վէպի բանասիրական ուսումնասիրութիւնը թերի է: Նա պատուիրում է. «Սիրելի պիտի լինի մեզ համար մեր վէպը, որ մերն է, մեր սեփականը, մեր ժողովրդի դարաւոր պատկեր..., ուսումնասիրենք այն բազմակողմանի կերպով, և մենք կգտնենք նրա մէջ մեր ժողովրդի հոգու խորքերը: Իսկ երբ մեր բանաստեղծներից մի հանճարեղը այդ նիւթը նոյն ժողովրդական ոգով մշակէ»³⁶ գեղարուեստօրէն, դա կը լինի մեր ազգային բանաստեղծութեան մարգարիտը»³⁷:

Այլ ժողովուրդների բանագիտական փորձին ծանօթանալիս տեղեկանում ենք, որ XIX դարասկզբին Գերմանիայում հիմնադրուել է համեմատական առասպելաբանութիւն գիտակարգը, որը հնարաւորութիւն է ընձեռել համեմատել ցեղակից ժողովուրդների զրոյցներն ու առասպելները,

32 Սրուանձտեանց Գ., Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ կամ Մոհրի դուռ, էջ 131:

33 Աբեղեան Մ., Հայ ժողովրդական վէպը, էջ 6:

34 Տե՛ս К. П. Патканов, Материалы для изучения армянских наречий, выкуск II, Мушский диалект, Санкт Петербург, типография Императорской академии наук, 1875:

35 Տե՛ս Халатянц Г., Давид Сасунский, Москва, 1897:

36 Տե՛ս «Սասունցի Դաւիթ դիւցազն», Հիւսէց Հ. Ծաղարբէգեան, Թիֆլիս, 1895: Մարդեան Գ., Յովհ. Թումանեանի «Սասունցի Դաւիթ» պոէմի եւ նոյնանուն համահասարակ բնագրի ընդհանրութիւններն ու տարբերութիւնները, էջ 79-97:

37 Աբեղեան Մ., Մատենագրութիւն «Սասունցի Դաւիթ» հայ ժողովրդական վէպի մասին, «Սասունցի Դաւիթ», Յոբելեանական ժողովածու, էջ 59:

պարզել դրանց լեզուական հիմքը, բացառապես բարբառային տարբերություններն ու հիմնական գծերը:

Հայկական էպոսագիտության համեմատական պատմաբանություն կարեւոր մի բաժին կարելի է սահմանել լեզուատարածքային համեմատական պատմաբանությունը, որի ուսումնասիրությունն ինքնուրույն տարբեր բարբառներով դրի առնուած փոփոխականների լեզուական յատկանիշների առանձնացման ու զուգադրման խնդիրը կլինի: Բայց և, պէտք է նշել, որ մէկ մասնագետի հնարաւորութեան սահմաններից դուրս է էպոսի բոլոր պատմաների լեզուական իրողությունների համապարփակ քննութիւն կատարելը, ուստի անհրաժեշտ է աշխատանքային խմբի ձևաւորում:

էպոսի անխառն ու անեղծ լեզուի մասին առաջին անդրադարձը կատարում է Ղուկաս Ինճիճեանը: Նա գրում է. «Մերքն խօսին անդէն ի լեզու ինչ որ մերձաւորութիւն յոյժ ունի ընդ դրաբառին, այս ցուցանէ զոչ խառնակիլ նոցա ընդ դանազան օտար ազգս, ընդ որովք անկան բազմութիւն ազգիս մերոյ և եղծին զառաջին յատակութիւն լեզուին»³⁸:

Հերոսավէպի տարբերակների միջոցով ընձեռուած բարբառային հարստութիւնը միշտ էլ նկատելի և արժեւորելի է եղել անուանի հայերէնագէտների կողմից: Ն. Մառը, դեռևս 1889 թուականին Մոկաց պատումը համարում է բարբառային աննախադէպ նիւթ և յորդորում է մասնագէտներին՝ վեր հանել դրա լեզուական գանձերը³⁹:

Ա. Ղարիբեանը եւս, անդրադառնալով Մոկսի պատմին, ընդգծում է, որ «Վարիանտների լեզուների մէջ ամենահետաքրքրական և գիտական տեսակետից

արժէք ներկայացնողը Մոկսի խօսուածքն է: ... Այդ առանձնայատկութիւններն այնքան իւրօրինակ են, որ Հայ բարբառագիտութեան համար դրանք կդառնան լեզուական և լեզուաբանական գեղեցիկ արժէքներ»⁴⁰,... ապա շարադրում է այդ բարբառի առանձնայատկ գծերը՝ համեմատելով Վանի բարբառի հետ:

Մեծանուն հոգևորական Գ. Յովսէփեանի՝ Մոկսի բարբառով գրառած «Սասմայ ծռերի»⁴¹ տողատակերում բանագիրտական մեկնաբանություններից և համեմատություններից բացի, կան բառերի և բառակապակցությունների, բանաձևային արտայայտությունների բացատրությունների՝ թուով 450: Ըստ այսմ կարող ենք ասել, որ բանահաւաք-բանագէտը կազմել է Մոկսի գործուն բառապաշարի բառարան, որից կարելի է հաւաստի տեղեկություններ քաղել Մոկսի բնաշխարհի և մոկսեցիների բարքերի ու սովորոյթների, կենսակերպի և այլ իրողությունների մասին:

Արժեւորելով բարբառային հայերէնի դերը՝ Տ. Զիթունին վկայաբերում է Գ. Սրուանձտեանցի տողերը՝ տպագրուած «Նոր գիր» եռամսեայ հանդէսում. «Անշտեմարան է Հայ Լեզուի ճոխացման եւ կենդանութեան: Այդ կողմից նոյնչափ արժէքաւոր, որչափ մեր դասական լեզուն՝ գրաբարը: Ժողովրդական բարբառների քերականական ուսումնասիրութիւնները եւ բառամթերքը օգնում են ոչ միայն Հայ Լեզուի գիտական հասկացողութեան, այլեւ առատ նիւթ մատակարարում համեմատական լեզուաբանութեան»⁴²: Բանահիւսութեան նմուշները և յատկապէս էպոսի փոփոխակները լեզուական առատ նիւթ են

38 Հ. Ղ. Ինճիճեան, Գշ. աշխ., էջ 200:

39 Տե՛ս Արեղեան Մ., *Երկեր*, հտ. Ա., էջ 526:

40 Ղարիբեան Ա., «Սասմայի Դալիթ» ժողովրդական վէպի լեզուն, էջ 83:

41 Սասմայ ծռեր, Թիֆլիս, 1892, էջ 61-151:

42 Տե՛ս Զիթունի Տ., *Սասմական*, «Հայագիտում» մատենաշար, թիւ 11, «Սասմայ տուն», «Սասմայ ծռեր», «Սասմայի Դալիթ» անուններով ծանօթ Հայ ժողովրդական դիւցազնավէպին եօթը ճիւղին ամբողջական պատմութիւն, Վան-Կ. Պոլիս-Փարիզ, 1907-1942, էջ 28:

մատակարարում և հայոց լեզուի պատմութեան ուսումնասիրման անգնահատելի վաւերականներ են:

Բանասիրական, նաև բանագիտական ծանրակշիռ ներդրում է կատարել էպոսի առաջին գրառողը՝ Գ. Սրուանձտեանցը, որը բարբառը համարում է «Մասեաց սրինգ», որի հոգենորոգ զօրութիւնը բնորոշում է այսպէս. «Հայք անտարբերութեան գերեզմանի ափէն ետ դարձնելու համար իրենց հայրենական բարբառով կանչելու է զիրենք: Մասեաց սրինգները հնչեցնելու է իրենց ականջին»⁴³:

Ուշագրաւ են Գ. Սրուանձտեանի բարբառագիտական դիտարկումները: Վկայաբերելով իր առաջին բանասացին՝ նա գրում է. «Պատմիչի (իմա՝ Կրպոյի) լեզուին մէջ բաղիշէցոց բառեր կան գործածուած, պատճառն այն է, որ պատմիչի գէղը թէպէտ Մշոյ կը պատկանի, բայց Բաղիշոյ մօտակայ է. ընդհանրապէս խոյթայ և Զուխարայ գէղերու հայոց լեզուն այս տիպն ունի»⁴⁴:

Գ. Սրուանձտեանցը յիշատակում է, որ հայ բարբառագիտութեան հիմնադիր Ք. Պատկանեանն առաջինն է նկատում էպոսի ներառած բարբառային հարստութիւնը: Նա գրում է. «Պրոֆ. Ք. Պատկանեանն անմիջապէս 1875 թ. Վէպի բնագիրն օգտագործում է լեզուաբանական նպատակի համար: Նա իր «Նիւթեր հայերէն բարբառներն ուսումնասիրելու համար» շարքի մէջ, ուրիշ նիւթերի հետ, հրատարակում է իբրեւ երկրորդ պրակ նաև «Սասունցի Դաւիթ» վէպն ամբողջապէս: Սկզբում դնում է համառօտ քերականական ծանօթութիւններ Մշոյ բարբառի մասին և վերջից մի բառարան»⁴⁵:

Ինչպէս յայտնի է, Գ. Սրուանձտեանցի գրառած արձակ պատումի վերջաբանում

լեզուական հետաքրքիր դիտարկումներ կան Մուշի տարածքի բարբառային հնչիւնների, բառապաշարի, բայի և լեզուական այլ հարցերի մասին, որն էլ կարող ենք համարել էպոսի առաջին լեզուական քննութեան փաստ: Օրինակ, գրում է. «Խօսք մը կազմելու համար բառերու ամենէն կարեւոր մասն է բայը դարձունելով ու շաղրութիւն գաւառացւոց լեզուի վրայ, կը տեսնենք, որ Բաղիշեցին այսպէս կը կազմէ կամ կը խոնարհէ բայն. «Ես եմ շինեմ եմ այս տունը», «Դու ես կոտրեր ես մեր ծառը», «Մարգարն էր տարեր էր հացը» և այլն: Դաւրիճեցին այսպէս. «Գնացիմ, տեսամ, ասամ, եկամ», այսինքն է՝ գնացի, տեսայ, ըսի, եկայ: Ղարաբաղին այսպէս. «Գամ եմ, գաս ես, դամ է», այսինքն է՝ գամ, գաս, գայ և այլն: Մշեցիք բայի հայցական խնդրի զ նախդիրը մինչեւ անգամ յատկացուցիչի վրան ալ չեն դանց ըներ դնել»: Օրինակ՝ «Զքո պապու մեռլի գլխու վարչամակն....», -կըսէր Մշեցի մը Մշեցւոյ մը»⁴⁶:

Այնուհետև Գ. Սրուանձտեանցը խօսում է բացառական հոլովի կազմութեան, անցեալ դերբայի, բայի լծորդութեան, սեռերի և քերականական այլ իրողութիւնների մասին:

Ուշագրաւ են նաև Գ. Սրուանձտեանցի ոճագիտական դիտարկումները էպոսի պատումներում կիրառուած գեղչման, աւելադրութեան, բակառութեան, կրկնութեան և փոխաբերութեան գեղարուեստական օրինակների մասին: Բանահաւաքը համոզում է յայտնում, որ գաւառական ոճերի մասին գաղափար կազմելու համար պէտք է կարդալ Գ. Ախվերդեանի գիրքը⁴⁷, որը Թիֆլիսի բարբառի մասին իմաստասէր

43 Մանգիճեան Ա., *Ազգային դիցազգական աշխարհ (Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ)*, Երկրորդ տարուայ ուսմունք եւ ընթերցմունք, Տպարան Մովսէս Վարդանեանցի, Թիֆլիս, 1881, էջ 1 (մէջբերում գրքի անուանաթերթից):

44 Տե՛ս Արեղեան Մ., *Երկեր*. հտ. Ա., 1966, էջ 518:

45 Նոյն տեղում. էջ 521:

46 Սրուանձտեանց Գ., *Գրոց ու բրոց ...*, էջ 191:

47 Տե՛ս Ախվերդեան Գ., *Գոսանք. Սպեաթ-Նօվայ*, Լուս գցած աշխատասիրութեանով Գեորգեայ Ախվերդեան. Մոսկվա, 1852:

մարդու գործ է և, ցառօք, յայտնի չէ տաճկահայերի շրջանում:

Հայոսի լեզուին, սկզբնաղբիւր բարբառին համեմատաբար ընդարձակ անդրադարձ է կատարում Ա. Ղարիբեանը՝ նշելով, որ ««Սասունցի Դաւիթ» ժողովրդական մեծ վէպը պատմուել ու պատմուում է հայկական բազմաթիւ բարբառներով: Մինչև այժմ արդէն գրի առնուած կան Մշոյ, Վանի, Խոյի, Ուրմիայի բարբառներով, Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գաւաշի, Հայոց Ձորի, Այաշկերտի, Խլաթի խօսուածքներով և, նոյնիսկ, Նոր-Նախիջևանի բարբառով: Գրի առնուած վարիանտներից ամենաշատը Մոկսի խօսուածքով է, այդ խօսուածքով կայ 15 վարիանտ»⁴⁸: Բնականաբար Մոկսի տարածքի այս տասնհինգ տարբերակների լեզուահամեմատական քննութիւնը նորանոր հետաքրքիր բացայայտումներ կարող է երևան հանել ի շահ արդի բարբառագիտութեան զարգացման:

«Մոկսի բարբառը, ըստ առաջին օրինակի, իր հնչիւնական սիստեմով նման է Արարատեան, Թբիլիսիի և Ջուղայի բարբառներին, մինչդեռ ըստ երկրորդ օրինակի՝ նա նման է Վանի, Խոյի, Ուրմիայի և արևելեան միւս բարբառներին»⁴⁹, մեկնաբանում է Ա. Ղարիբեանը: Ինչպէս անուանի լեզուաբանն է ասում, աւանդավէպը դրառուած է «զարգարուն ու ծաղկաւոր լեզուով»։ Հէնց դրանով էլ հնարաւոր է դարձել հիւսել հարուստ մակդիրներ, կրկնաւորութիւններ, փոխաբերութիւններ ու այլաբանութիւններ, խօսուն չափազանցութիւններ, անձնաւորումներ ու համեմատութիւններ:

Բարբառագիտական վստահելի վերլուծութիւններ, բարբառատարածքներ և

բարբառների նկարագրութիւններ են ներկայացուած նաև վիպերգութեան Ա հատորի «Տեղագրութիւն» և «Բարբառների քերականական դիտելիքներ» վերնագրերի ներքոյ⁵⁰: Չնայած Ա հատորում զետեղուած են Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գաւաշի և Հայոց ձորի տարածքների տարբերակները, սակայն Տ. Չիթունու՝ Սպարկերտի խօսուածքով գրի առած «Սասունական» ընդգրկուած չէ:

Եզրակացութիւն

«Սասնայ ծռեր» հերոսավէպը մեծ արժէք ունի Հայաստանի, մասնաւորաբար Սասուն լեռնաշխարհի պատմաշխարհագրական, Հայ ժողովրդի ազգային հոգեբանութեան ու ոգու բարձրացման, բարքերի ու սովորոյթների, տեղաշարժերի, լեզուամտածողութեան, բարբառների և այլ հարցերի առումով: «Մեր վէպի բազմաթիւ վարիանտները շատ կարեւոր են ընդհանրապէս ժողովրդական վէպի՝ հայոսի դիալեկտիկական ուսումնասիրութեան տեսակէտից: Վէպի այս դարաւոր շարժումը մի հազուագէպ երևոյթ է աւանդական վիպական բանահիւսութիւնների պատմութեան համար», գրում է Ա. Ղանալանեանը⁵¹:

Բանասացների և բանագէտների համատեղ ջանքերի շնորհիւ իրագործուած դժուարին գրառումները՝ հայկական էպոսի բազմաթիւ պատումները մեր ազգային հարստութիւնն են: Դրանք բարբառագիտական առումով բազմակողմանի ու հանգամանալից քննութեան, ինչպէս նաև մշակուած նորագոյն տառագարձութեամբ վերահրատարակուելու կարիք ունեն:

48 Ղարիբեան Ա., «Սասունցի Դաւիթ» ժողովրդական վէպի լեզուն, էջ 81:

49 Նոյն տեղում, էջ 83:

50 Տե՛ս Սասնայ ծռեր, Երեւան, 1936, էջ 53-58 և 59-78:

51 Արեղեան Մ., Երկեր, Բու. Ա., էջ 551: